

«ԾԱՌ-ԱՐԵԻ» ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՒ ԴՐԱ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՔԱՅԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Սարգիս Գ. Պետրոսեան

Վաղ նախնադարի բնապաշտութեան ուրուրում սկիզբ առած ծառապաշտութիւնը հազարամեակներ շարունակ լայն տարածում է ունեցել Հայաստանում: Պաշտամունքի առարկայ էին յատկապէս կաղամախին, բարդին, սօսին, ոփին, ցրդին եւ միւս երկնասլաց ու երկարակեաց ծառատեսակները: Առաւել պաշտելի եղել են դրանցից սօսափողները, որովհետեւ, նախնադարի մարդկանց բնորոշ առասպելաբանական մտածողութեամբ, սօսափիւնը նոյնն էր ինչ փսփսոցը, իսկ փսփսալը համազօր էր գաղտնիք յայտնելուն: Իմաստային այդպիսի դարգացում կրած բառի ու շարժում օրինակ է հին գերմանների ուռնական սրբազան գրերի անունը, որն արմատակիցն է հին բարձր գերմաներէն *rūnēn* «փսփսալ» եւ գոթերէն *rūna* «գաղտնիք» բառերը¹: «Փսփսացող» ծառերը համարուած էին գուշակութեան առարկաներ, նաեւ՝ բախտագուշակներ եւ բախտ պարգեւողներ:

Եթէ ոչ վաղ անցեալում մեր նախնիները երկնասլաց եւ երկարակեաց (մինչեւ 2000 տարի ապրող) սօսիներով էին պատուած եկեղեցիների ու վանքերի բակերը, ապա աւելի վաղ ունեցել են դրանց ամբողջական պուրակներ: Արմաւիրի սօսիների պուրակը, որը կրում էր նախահայր Հայկի աւագ որդի Արամանեակի անունը, համահայկական պաշտամունքի առարկայ էր: Աւանդութեան համաձայն, Արա Գեղեցիկի թոռը՝ Անուշաւան նահապետը, յայտնի է եղել Սօսանուէր մականունով, որովհետեւ դեռեւս մանուկ ընծայուել էր «ի սօսիսն Արամանեակայ, որ յԱրմաւիր» գորոց զսաղարթուցն սօսաւիւն՝ ըստ հանդարտ եւ կամ սաստիկ շնչելոյ օղոյն, եւ թէ ուստի շարժումն՝ սովորեցան ի հմայս

1 М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. III, М., 1971, стр. 517.

յաշխարհիս Հայկազանց, եւ այս ցբազում ժամանակս»²:

«Ծառ-արեւ» զուգորդուած պաշտամունքը հնագոյն արմատներ ունի: Ըստ Վ. Տոպորովի, դա պայմանաւորուած էր նրանով, որ ծառի (<Տիեզերական ծառ, Կենաց ծառ) անունը փոխադրուած էր ժամանակային մակարդակ եւ տարածուած ժամանակի որեւէ պարբերաշրջանի (տարի, դար եւ այլն) վրայ կամ էլ նշում էր անցեալի վիճակ, ինչպէս հին սլաւ. * *drevъn* (>ռուս. *древный*) բառի դէպքում (սա առնչութիւն ունի «ծառ», այլ ոչ թէ «ամուր լինել» հնդեւրոպական արմատի հետ)³: «Ծառ-արեւ» միասնական պաշտամունքը դրսեւորուել է նաեւ միջնադարի հայ երականութեան մէջ: Մխիթար Ապարանցու վկայութեամբ արեւորդիները աղօթելիս «ընդ որ երթայ արեգակն՝ ընդ այնմ երկրպագեն, եւ պատուեն զծառն բարտի եւ զշուշան ծաղիկն եւ զբամբակին եւ զայլսն, որ զգէմս իւրեանց շրջեցուցանեն ընդդէմ՝ արեգականն», իսկ քրիստոնեայ դարձած արեւորդիներին ներսէս Շնորհալին զգուշացնում էր, որ բարդի ծառն աւելի մեծ պաշտամունքի չարժանացնեն, քան միւս ծառերը, որովհետեւ «այդ ծառ, որ բարտի անուանի ի կուսպաշտութեան ժամանակն ի պաշտօն առեալ էր, յորս եւ

2 Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Երեւան, 1981, գիրք Ա, գլ. ի: ԺԹ. դ. Վերջերի եւ ի. սկզբների Սրբազան ծառերի պաշտամունքի վերաբերեալ տե՛ս Գ. Սրուանձտեանց, *Երկեր*, հտ. II, Երեւան, 1982, էջ 380. Ե. Լալայեան, *Երկեր*, հտ. II, Երեւան, 1988, էջ 161, 422. տե՛ս նաեւ Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. VII, Երեւան, 1975, էջ 52-54:

3 В. Топоров, Прусский язык, Словарь, т. I, А-Д, М., 1975, стр. 384.

դեւք մտանէին, եւ ի մարդկանէ երկրպագութիւն ընդունէին»⁴:

Հնդեւրոպական միւս ժողովուրդների պաշտամունքներում եւս կար «ծառ-արեւ» միասնութեան գիտակցումը: Յայտնի է, որ միջնադարեան Լիտուայում, երբ քրիստոնէութեան քարոզիչ Յերոնիմոս Պրագացին համոզում էր լիտուացիներին հատել իրենց սրբազան համարուած պուրակները, կանանց ամբողջ միապետին աղաչում էր նրան հետ պահել այդ որոշումից, որովհետեւ «անտաներն աւերելով, հաւատում էին, թէ նա աւերում է տունն աստու, որը ժողովրդին անձրեւ եւ արեւի լոյս է պարգեւել»⁵: Եթէ «ծառ-անձրեւ» իմաստաբանական կապը ուղղակի է՝ իրականութեան ոլորտից (անտաների վրայ են ամպեր կուտակուում), ապա «ծառ-արեւ» կապը հասկանալի կը դառնայ, եթէ չանտեսուեն դրա վերաբերեալ եղած հայ առասպելաբանութեան տուեալները եւ սրա առարկայական դրսեւորումները: Մեր վաղագոյն ժայռապատկերներից մէկում մեր գիմնայ փարթամ Կենաց ծառն է, նրանից վերեւ՝ թեւաբաց թռչնի պատկերը, իսկ սրանից էլ վերեւ՝ իր օրական շրջապտոյտի բարձրակէտին պատկերուած սիւլառակածեւ կամ գնդածեւ Արեգակը (նկ. 1)⁶:

Վանեցիների նախնիների առասպելաբանական մտածողութեամբ ստեղծուած հանելուկներից մէկում ասուում է. «Ձի (ինձ) ծառը կեր Հնդաց քաղաք, / ձղէր թալէր (գցել) քաղքէ քաղաք/ Հմեն ճղին սինամօր խաւք»⁷: «Արեգակ» պատասխանն ակնկալող այս հանելուկում Արեգակի փոխարէն՝ որպէս նրա համարժէք, հանդէս է գալիս հեռու արեւել-


4 Ղ. Ալիշան, Հայոց հիմնաւորը կամ հեթանոսական կրօնը, Երեւան, 2002, էջ 54, 44:

5 Ջ. Ֆրեզեր, Ոսկէ ճիւղը. մոգութեան եւ կրօնի ուսումնասիրութիւն, Երեւան, 1989, էջ 145:

6 Հ. Մարտիրոսեան, Հ. Իսրայէլեան, Գեղամայ լեռների ժայռապատկերները. «Հայաստանի հնագիտական յուշարձանները», 6, Երեւան 1971, աղ. 224:

7 Ս. Յարութիւնեան, Հայ ժողովրդական հանելուկներ (այսուհետեւ՝ ՀԺՀԱՆ), Երեւան, 1965, էջ 4:

քում («Հնդաց քաղաք») գտնուող վիթխարի («քաղքէ քաղաք» ճիւղաւորուած) Կենաց ծառը՝ վրան թառած պահապան սինամհաւքերով: Այլ կերպ են այդ խորհրդանշանները տեղ գտել Կարմիր բլուրից պեղուած ուրարտական զարդատուփի կափարիչին, որտեղ կենտրոնական մասում պատկերուած Կենաց ծառը վերեւում ունի արեւի խորհրդանշանը, իսկ շրջապատում՝ երկու արծուամարդ գերբնական էակներ (նկ. 2)⁸:



Նկ. 1



Նկ. 2

«Տարի» եւ «արեւ» հասկացութիւնների փոխադարձ կապի գիտակցումը եւս գալիս է հազարամեակների խորքից: Անանիա Շիրազացին այդ առիթով գրում է. «Արդ յայտ է, թէ զտարի յարեգակնէ գիտացաք, եւ զամիսս թէ զտարի յարեգակնէ գիտացաք, եւ զամիսս թէ զտարի յարեգակնէ գիտացաք, եւ զամիսս թէ զտարի յարեգակնէ գիտացաք»⁹: Մեր նախնիները տարի էին կո-

8 Б. Пиотровский, Искусство Урарту. VIII-VI вв. до н.э., Л., 1962, рис. 66. Ս. Հմայեակեան, Վանի թագաւորութեան պետական կրօնը, Երեւան, 1990, աղ. 21:

9 Ա. Աբրահամեան, Անանիա Շիրակացոյ մատենագրութիւնը. ուսումնասիրութիւն, Երեւան, 1944, էջ 293:

չու՞մ նաեւ Հայոց ընտանիքներում «նոր տարուայ առթիւ պատրաստուած տափակ ու կլոր քաղցր հացը, որի մէջ զնու՞մ են մի փոքր դրամ. ու՞մ բաժնի մէջ, որ հացը կտրելու ժամանակ դրամը գտնուի՝ նա այդ տարի բախտաւոր կը համարուի». տարի կոչուում էր նաեւ «նոյն այդ դրամը»¹⁰: Կասկած չկայ, որ «տափակ ու կլոր հացը» եւ նոյնպիսի դրամը խորհրդանշում են նոյնպէս «տափակ ու կլոր» ընկալուած Արեգակի սկաւառակը: Հէնց «տարի» հասկացութիւնն է եղել «ծառ» եւ «արեւ» հասկացութիւնները՝ միանգամից անըմբռնելի, կապի մէջ զնու՞ղը՝ դրանց միջակայ օղակը:

«Տարի-ծառ» հասկացութիւնների գու՞գորդման արգասիք Հայ ժողովրդական հանրուկներից մէկում, որի պատասխանն է «տարի», աւու՞մ է՝ «մի ծառ կայ՝ տասներկու ճուղն ունի/Ամէն ճուղն էլ՝ եռեսուն խնձոր/ամէն մի խնձորի կէսը սեւ ա, կէսը սիպտակ» (Լոռի, Սալմաստ)¹¹: Այստեղ ծառը տարին է՝ իր 12 ճիւղ-ամիսներով, 30 խնձորները ամսի 30 օրերն են՝ իւրաքանչիւրը բաղկացած սեւ-գիշերից եւ սպիտակ ցերեկից: «Տարի-ծառ» գու՞գորդման արգասիք է, մեր կարծիքով, նաեւ տարի (<տար-ի) բառը կազմուած հ.-ե. ծագումով -ի վերջածանցով (Հմմտ. այգի, բարդի, գիճի եւ այլն)՝ տար արմատից: Վերջինը նոյնն է տարգալ «գգալ» (< «փայտէ գգալ») եւ աճտառ (<ան-տառ) բառերի տար/տառ (<հ.-ե. *deru-/*daru- «ծառ, փայտ») արմատի հետ:¹²

«Տարի-ծառ» եւ «տարի-արեւ» գու՞գորդումներից նախնականը, անկասկած, եղել է «տարի-ծառ» գու՞գորդումը, որովհետեւ վաղ նախնադարում մարդը գեոցես չէր կարող գարնանային գիշերահաւասարների կամ ձմեռային արեւադարձների միջոցով սահմա-

10 Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետեւ՝ ՀԲԲ), հտ. IV, Երեւան, 1945, էջ 387:
 11 ՀժՀ, էջ 16:
 12 Գ. Զահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն. Գալստրայի ժամանակաշրջան (այսուհետեւ՝ ՀԼՊԺ), Երեւան, 1987, էջ 118, 245:

նել «տարի» գաղափարը: Աւելի հեշտ էր ծառի բողբոջման եւ սաղարթաւորման, նրա սերմնատուութեան, տերեւաթափի եւ նորից նիրհի մէջ մտնելու միջոցով որոշել 4 եղանակները, որոնց հանրագումարը յանգեցրել է «տարի» գաղափարին:

Հ.-ե. *deru-/*doru-/*daru- արմատից ծագած եւ «ծառ» > «տարի» անցումն արձանագրած տարի բառից բացի, նոյնպիսի իմաստաբանական անցում է կատարել սարդ/սարդի/սարդենի «մայրի ծառը» բառը¹³:

Տարի բառի նման հաւաստի ստուգաբանութեան չարժանացած սարդ բառը նոյնն է, ինչ եւ «տարի» ու «արեւ» նշանակող հնդեւրոպական մի քանի լեզուում առկայ *sard բառը: Հմմտ. Հայ. Գաւաւսարդ (<*նաւա-սարդ կամ *նաւ-ա-սարդ) «ամանոր, նոր տարի», հին հնդկ. çarad «տարի, աշուն», աւեստ. sarəda «տարի», պարս. sāl (<*sard) «տարի», լիււղ. sardis «տարի, արեւ», «արեւի աստուած»¹⁴:

Փոքրասիական Լիււղիայի մայրաքաղաք՝ Սարդէսի (Σαρδεις) հովանաւորը համարուում էր Ապոլոնը¹⁵, այսինքն՝ յոյների կողմից իրենց Ապոլոնին նոյնացուած արեւի աստուած Տարծուցը: Սարդ «մայրի ծառ» բառը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. ker- արմատի ստորին *kr- ձայնադարձից -d ածականով: Արմատի վերին՝ ker-, ձայնադարձից ունենք սերել «ածել, բազմանալ, սերել» եւ սերմ (<սեր-մն) «բոյսի կամ կենդանու սերմ, ցեղ, սերունդ» բառերը¹⁶: Սարդ բառի -դ ա-

13 Նոր բառգիրք հայկական լեզուի (այսուհետեւ՝ ՆՀԲ), հտ. II, Երեւան, 1981, էջ 700. Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան (այսուհետեւ՝ ՀԱԲ), հտ. IV, Երեւան, 1979, էջ 186:
 14 Գ. Ղափանցեան, Հայոց լեզուի պատմութիւն, Երեւան, 1940, էջ 49, ՀԱԲ, հտ. III, Երեւան, 1977, էջ 435:
 Նաւասարդ բառը համարուում է իրանական փոխառութիւն, բայց իմաստով հայերէն կազմութիւն է. հմմտ. հայ. ամանոր, անոր տարի՝ բխած «տարի» հասկացութիւնից. բայց իրանական լեզուներում անորոգ-նու-որոգ, բառացի՝ «նոր օր» (<օր) հասկացութիւնից:
 15 Herod., I, 86-87; I, 91-92.
 16 ՀԱԲ, հտ. IV, Երեւան, 1979, էջ 204:

ճականի համար Հմմտ. աղ>օղ, գիճ, կոկորո, պիճ, ստերո, բառերի -դ ածականները¹⁷: Հ.-ե. *kr- նախածեւից ունեցել ենք նաեւ centum-ային *կարդ տարբերակը՝ առկայ Անուշաւան Սօսնուէրի հօր՝ Արայեան Արայի Կարդոս անուան¹⁸ մէջ:

Նոյն անուան satəm-ային տարբերակն է ընկած նաեւ բիսյնական արքայատոհմին բնորոշ Sarduri գահանուան հիմքում: Նշենք, որ սրբազան (Կենաց) ծառ պատկերող մի որմնանկարում նրան երկրպագում է ուրարտական թագաւորը՝ ձեռքին բռնած ծառի ճիւղը¹⁹: Սրբազան ծառի խորհրդանշել է տեղադրուած նաեւ Իշպուրիի եւ Մենուայի կառուցած Խալդէի աստուծու մուծածիւրեան տաճարի²⁰ եռանկիւնածէւ ճակտոնի վերին-տաճարի: Արեւի աստուծու փոքրասիական մասին: Արեւի աստուծու փոքրասիական մասին համարուած Sarduri անուան մէջ, մուծիւն համարուած Sarduri անուան մէջ, Գր. Ղափանցեանի կարծիքով, ուրարտական դպիրները «աստուածութիւն էին տեսնում, դպիրները «աստուած RI (=Istar)+duri», իսկ RI գրելով «աստուած RI (=Istar)+duri», իսկ RI գաղափարանից հնչել է SAR, բայց իսկականը է հարկէ սա չէ, այլ sard+ur»²¹:

Մեր կարծիքով՝ Sarduri անուան իմաստաբանական դաշտը ներառել է ինչպէս «ատարի», այնպէս էլ «ծառ-արեւ» գու՞գորդումները:

Սարդուրի Ա.-ն (Ք. ա. 840-ական-825 թթ.) Seduri անունով է յիշատակուած Ասորեստանի Սալմանասար Գ. թագաւորի կողմից:

17 Հ. Սուքիասեան, Աճականը հայերէնում, Երեւան, 1986, էջ 74:
 18 Խորենացի, Ա, Ժե, Ա, ի:
 19 Հայ ժողովրդի պատմութիւն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հտ. I, Երեւան, 1971, էջ 413:
 20 Ս. Հմայեակեան, Աշ. աշխ., էջ 66:
 21 Գ. Ղափանցեան, Աշ. աշխ., էջ 49: Sarduri արքայանուան հետ հմմտ. հնագոյն Յունաստանի Միգոյեան արքայատոհմի երեք անդամացուցիչները՝ Sa-tu-ri/Sarturi գահանուան եւ Խալդայում Նորասիական արքայներին տրուած Sardi կոչումը (Մ. Цымбурский, А. И. Немировский, Эпрус-ки.- «Вестник древней истории», 1986, N3, стр. 169, 175 пр. 34):

մից Ուրարտուի դէմ ձեռնարկած արշաւանքի նկարագրութեան մէջ²²:

Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ Seduri-ն (Si-e-du-ri) Sarduri-ի աղաւաղուած ձեւն է: Սակայն երկու հանգամանք խանգարում են դա ընդունելուն: Նախ՝ Ուրարտուում պետական կրօնի մաս հանդիսացած ծառապաշտութիւնը, ապա՝ այն հանգամանքը, որ Սարդուրի Ա.-ն ասորեստանցիներին կարող էր յայտնի լինել նրա կողմից Sarduri գահանունն ընդունելուց առաջ, այսինքն՝ երբ նա դեռեւս թագաժառանգ էր Seduri անունով, բայց մասնակիցն էր իր թագաւոր հօր ձեռնարկումներին: Երկրորդ դէպքում նա կարող էր հետեւած լինել հօր՝ Արամէի (Ք. ա. 860-ական-840 թթ.), օրինակին, որն, ինչպէս ստորեւ կը տեսնենք, ընդունել էր Lutipri²³ գահանունը:

Գահանուն ընդունելու կարգը եւս նախնադարեան արմատներ ունի: Հայկական վաղապետական կազմաւորումներից մէկում այդպիսի կարգի գոյութիւնը փաստուած է Ասորեստանի Թիգլաթփալասար Ա. թագաւորի միջոցով: Ք. ա. 1115-1113 թթ. Արեւմտեան Տիգրիսի աւազան իր բանակով ներխուժած Թիգլաթփալասարը նախ դրաւ էր խոստեղ գտնուած Կադմուխի/Կարմայ այստեղ գտնուած Կադմուխի/Կարմայ տուն (ըստ աւանդութեան՝ Հայկ նահապետի տուն (ըստ աւանդութեան՝ Հայկ նահապետի տուն (ըստ աւանդութեան) անունից)²⁴ երկիրը: Այս կազմուած թոռան անունից)²⁴ երկիրը: Այս առթիւ նա գրում է. «Նրանց թագաւորին՝ Քալի-Թեշուրի որդի Քիլի-Թեշուրին, որին անուանում էին (նաեւ) Իրրուպի, ձեռքերով ստանալով նրա կանանց, նրա հարազատ որդիներին, ազգականներին... ես տարա, ուղիղ վարը, հարստութիւնը դուրս բերի»²⁵: Ինչպէս տեսնում ենք, գերեալ արքան, Քիլի-Թեշուր գահանունից (Թեշուր դիցանունը՝ որ-

22 И. Дьяконов, Ассиро-вавилонские источники об истории Урарту (այսուհետեւ՝ АВИИУ), ВДИ, 1951, NN 2, 3, 4, надп. N 28. Ն. Ադոնց, Հայաստանի պատմութիւն. Ակումբները. X-VI դդ. մ.թ.ա., Երեւան, 1972, էջ 195, 196, ծան. 1:
 23 Ն. Ադոնց, Աշ. աշխ., էջ 194:
 24 Խորենացի, Ա, Ժ-Ժբ:
 25 Հայ ժողովրդի պատմութեան քրեատմատիկա (այսուհետեւ՝ ՀժՊԲ), հտ. I, Երեւան, 1981, էջ 17:

պէս երկրորդ բաղադրիչ) բացի, ունեցել է մի «երկրորդ» անուն *Irrupi/Irupi* (Հմմտ. *Teššub/Tešub*): Ն. Ադոնցը նախ ընդունում էր սրա հին *šarrupi* տառադարձութիւնը, ապա գտնում, որ ճիշտը *Irrupi*-ն է՝ խուռիական *irpi*-ի եւ ուրարտական *ewri*-ի (առաջինի իմաստն «արքայ» է, երկրորդինը՝ «տէր») զուգահեռը:²⁶ Բայց սրանց միջև հնչիւնական համապատասխանութիւններ գտնելը դժուար է: Ի. Դեակոնովը *Irrupi*-ն վերականգնում է **Ewrif* տեսքով եւ ստուգաբանում խուռիերէնով՝ «իմ տէր»:²⁷ Անհաւատալի է, որ թագաւորն ինքն իրեն կոչէր «իմ տէր», մանաւանդ որ նրա վերականգնած **Ewrif* ձեւը հետու է *Irrupi*-ից:

Մեր կարծիքով՝ *Irrupi/Irupi* արքայանունը բաղկացած է **Ir-* եւ *-upi* բաղադրիչներից եւ ուղղակի կապի մէջ է սրբազան ծառերի պաշտամունքի հետ:²⁸

Բաղադրիչներից առաջինը մենք նոյնն ենք համարում հայերէն հիւր «պարգեւ», իսկ երկրորդը՝ ուրի «սօսի, բարդի, կաղամախի» բառերի հետ:²⁹ Հիւր բառը միջնադարեան «Բառագիրք Հայոց»-ի ձեռագրերում բերում է «պարգեւ», «պարգեւ, որդան», «պարգեւ, կամ որդան, կամ ծիրանի» բացատրութիւններով³⁰, որից պարզուում է, որ բառի առաջին նշանակութիւնը եղել է «պարգեւ»: Այս դէպքում, հիւր-ը կարող է ծագած լինել հ.-ե. **eisro*- «սրբազան ուժով օժտուած» նախածեւից եւ, ուրեմն արմատակիցն համարուել յունարէն հետեւեալ բառերի. *ἱερωσ* «աստուածներին ձօնել», «սրբազործել, պաշտել», *ἱερός*

«սրբազան», «աստուածների հովանաւորեալ, աստուածներին հաճոյ», *ἱερα* «զոհաբերութիւնը ընծաներ, զոհաբերութիւն, զոհ» (նոյն արմատից է նաեւ հին յունարէն *ἱερα* անձնանունը):³¹

Եթէ այդպէս է, ապա Կաղմուխի երկրի Բիլի-Թեղուբ թագաւորի «երկրորդ» անունը՝ *Irrupi*-ն, եղել է նրա զահաժառանգ եղած ժամանակուայ անունը եւ նշանակել է «պարգեւ ուրի»:

Սարդուրի Ա.-ն, հաւանաբար, թագաւոր օժուելիս է իր անուան *Se-* (գրութեամբ՝ *Sie-*) վանել փոխարինել *Sar*-ով, որի հետեւանքով *Seduri*-ին դարձել է Արեւի եւ Կենաց ծառի պաշտամունքների միասնութիւնը շեշտող *Sarduri* գահանուն: Իսկ ի՞նչ էին նշանակում նրա նախկին անուան *Se-* բաղադրիչը եւ *Seduri*-ն ամբողջութեամբ: Հնդեւրոպական նախալեզուի *(s)kai «առկայծել», «ստուեր» արմատն ունէր իր *kai-/kai-/kai- տարբերակները,³² որոնց յանգող մի շարք բառեր կան հնդեւրոպական ժառանգ լեզուներում. Հմմտ. հին հնդկ. *chāyā* «փայլ, արտացոլանք», «ստուեր», գոթ. *skeinan* «փայլել, շողալ, լոյս տալ», ռուս. *сиять* «շողալ», *сень* «ստուեր», պարս. *sāya* «ստուեր, հովանի», յուն. *σκιά* «ստուեր», *σκηνή* «վրան» եւ այլն:³³ Ըստ Բրեւոյթին, հ.-ե. *kai- տարբերակից է ծագում *Seduri* (*Sie-du-ri*) անուան *Se-*(*sie-*) բաղադրիչը³⁴, որի զուգահեռն առկայ է Բ. ա. 1112 թ.

26 Ն. Ադոնց, *ԱԶ*, աշխ., էջ 277:
 27 И. Дьяконов, *Предыстория армянского народа*, Ер., 1968, стр. 124, пр. 117.
 28 Ս. Պետրոսեան, *Թեղուբի հայկական մակդիրները գահանուններում*, ԳՊՄԻ հանրապետական գիտական աստաղբջանի միջոցով, Գիւմրի, 2011, էջ 17-20. Այսին, «Գիւզամեշը եւ խուլուպու ծառը» վիպերգի հնդեւրոպական-հայկական բաղադրատարրը, ՊԲՀ, 2008, թիւ 3, էջ 175-176, 179-180:
 29 ՆՀԲ, հտ. II, էջ 561, ՀԲԲ, հտ. III, Երեւան, 1944, էջ 614, ՀԱԲ, հտ. III, Երեւան, 1977, էջ 619-620:
 30 *Բաղադրք հայոց*, Քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Հ. Ամալեանի, Երեւան, 1975, էջ 186, 397 ծան. 312:

31 Т. Гамкрелидзе, В. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тб., 1984, стр. 788, 801. *Древнегреческо-русский словарь*, т. I, М., 1958, стр. 813-815.
 32 Г. Джаукян, *Взаимотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков*, Ер., 1967, стр. 142.
 33 М. Фасмер, *ԱԶ*, աշխ., հտ. III, էջ 602, 629:
 34 Սեպագիր *Sarduri* եւ *Seduri* անունների s-ով տառադարձման համար ի նկատի առնենք, որ անգամ միեւնոյն տեղանուններն ունեն s-ով եւ š-ով տառադարձումներ, ինչը կարող է պայմանաւորում լինել, ասորեստանագիտացի, Գաե բաբելոնեան գրատր աւանդութիւնների կիրառմամբ: Հմտ. *Barsua/Parsua/Baršua*, *Bustus/Busutu/Buštu*, *Saruadi/Saruadi*, *Sūra/Sūra* (տե՛ս Н. Ару-

յիշատակուած Դայանիի (յետագայ *Տայքը*) թագաւորի *Seni* (*Sie-ni*)³⁵ անուան մէջ: *Seduri*-ի *Se-* բաղադրիչը «առկայծել» եւ «ստուեր» տարբեր իմաստները, կարծես, յուշում են, որ այս անձնանունը նախ վերաբերել է սպիտակ կաղամախին՝ որպէս սրբազան ծառ, ապա՝ նրա հետ զուգադրուած (առասպելաբանական մտածողութեամբ) անձնաւորութեանը. Հմմտ. *սոս/սոսի* ծառանուան կիրառումը որպէս *Սոս/Սոսի* անձնանուն:

Բանն այն է, որ սպիտակ կաղամախի (*populus alba*) «տերեւների տակի կողմը սպիտակ մազմզուկներ կան, որ փայլում են արծաթի պէս» եւ «բունն է սպիտակ»:³⁶ Միեւնոյն ժամանակ այս հսկայ ծառը իր փարթած սաղարթով «ստուեր» է անում եւ «հովանի» է դառնում ամառային տապից ու արեւի ճառագայթներից նեղուած մարդկանց կենդանիների: Ըստ այսմ, *Seduri* աւանուան *-duri* բաղադրիչը սեպագիր գրանցումն է լինելու հ.-ե. **deru-/doru-* «ծառ» արմատի (վերին ձայնադարձով՝ **deru-*, միարմատի (վերին ձայնադարձով՝ **doru-*): Վերջինն առկայ է նաեւ հայ. տորգ «ծանր բաներ վերցնելու գլանածեւ փայտ» բառում:³⁷

«Մառ-արեւ» առասպելաբանական գուրդորման հետքերը նկատելի են նաեւ հ.-ե. **osp(h)/Hosp(h)-* նախածեւին յանգող բառերում: Արմատի նախնական նշանակութիւնը եղել է «կաղամախի, բարդի», որովհետեւ հնդեւրոպական շատ լեզուներում նրանից կազմուած բառերը հէնց դա են նշանակում. Հմմտ. հին իսլանդ. *osp*, հին անգլ. *æspa*, հրե. *aspa*, պրուս. *abse*, լատիշ. *apse*, ռուս. *осина*, բայց յուն. *ἄσπις* «կաղնու մի տեսակ» եւ *ἄσπις* «վահան»³⁸: Յունարէն վերջին բառը թէ՛ հնչիւնական եւ թէ՛ իմաստային կողմով մօտ է հնագոյն հայերէն **ոսպ*

արմատին, որովհետեւ հին վահանները ոսպ ընդեղէնի եւ արեւի սկաւառակի նման շրջանակած էին, իսկ վահանը արեւի խորհրդանշաններից մէկն էր: Սրանով պայմանաւորուած նախնադարեան եւ հին Հայաստանում գոյութիւն չի ունեցել վահանը նընդեցեալ գինուորի հետ թաղելու սովորոյթ (ի տարբերութիւն այլ գինատեսակների)³⁹: Յունարէն *ἄσπις* «վահան» բառին թէ՛ հնչիւնական եւ թէ՛ իմաստային կողմով առաւել մօտ է հայերէն ասպար «վահան» բառը, որը համարուել է պահպանելին (միջին պարսկերէն) բարբառային չեղեալ **aspar* ձեւից փոխառեալ⁴⁰: Բայց, մեր կարծիքով, այն բնիկ հայերէն է՝ կազմուած **ասպ* արմատից -ար վերջածանցից (Հմմտ. այս ածանցը գալար, դալար, կերպար, պալար եւ այլ բառերում):

Հնագոյն հայերէնում **ասպ* արմատի ոսպ տարբերակը եւս վերաբերել է թէ՛ վահանին եւ թէ՛ դրա խորհրդանշած արեւին: Հայ. ոսպնածեւ բառը նշանակում է «ոսպի ձեւ ունեցող», այսինքն՝ «բոլորչի, տափակ, մէջտեղն ուռուցիկ», իսկ ոսպնածեւ ապակին արեւի ճառագայթները կենտրոնացնող ապակին է՝ կոչուած նաեւ ոսպնեակ⁴¹: Վերջին պաշտամունքն անուանում է նաեւ «ժամացոյցի ճօրաբան նշանակում է նաեւ «ժամացոյցի ճօրաբանակի տակ կախուած ոսպնածեւ մետաղեայ ծանրոցը»⁴²: Ըստ Բրեւոյթին, հ.-ե. **osp(h)/Hosp(h)-* նախածեւից ծագած հայ. **ոսպ*/**ասպ* արմատի նախնական նշանակութիւնից բխեցուել է «արեւի սկաւառակ» երկրորդական նշանակութիւնը, իսկ սրանից՝ արտաքին նմանութեան եւ գոյնի պատճառով

ТЮНЯН, *Топонимика Урарту*, Ер. 1985, стр. 55, 60-61, 167, 250):
 35 АВИИУ, надп. N 10, ԸժՊԲ, հտ. I, էջ 20:
 36 ՀԲԲ, հտ. II, Երեւան, 1944, էջ 370:
 37 ՀԱԲ, հտ. IV, էջ 422:
 38 Т. Гамкрелидзе, В. Иванов, *ԱԶ*, աշխ., հտ. II, էջ 626-627:

39 Խ. Սամուէլեան, *Հին Հայաստանի կուլտուրան*, հտ. II, Երեւան, 1941, էջ 72-73:
 40 ՀԱԲ, հտ. I, Երեւան, 1971, էջ 273: Հայերէն **ասպ* արմատի «ծառ, փայտ» նախնական իմաստը պահպանում է *ասպարակ* (<ասպ-ար-ակ) տը պահպանում է բառում՝ «բաճիկ կոթի վրայ ամրացած տափակ փայտը կամ ձողը, որի միջով են ոտքով, որպէսզի բաճի բերանը խրոյս հողի մէջ» (ՀԲԲ, հտ. I, Երեւան, 1944, էջ 237):
 41 ՀԲԲ, հտ. III, էջ 571:
 42 Նոյն տեղում:

